

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական

գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Խ. Աբուլյանի անվան ՀՊՄՀ

aelita.dolukhanyan@gmail.com

ORCID iD: 0000-0001-9526-9464

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-52

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր - «Ուստա Կարո» վեպ, Ավետիք Իսահակյան, բանահյուսություն, սիրո երգեր, լեգենդներ, առասպելներ, «Մայրը» լեգենդը:

Ամփոփում

«Ուստա Կարո» վեպը Իսահակյանը համարել է իր ստեղծագործության գագաթը: Դա երևում է մտերիմներին գրված նամակներում, դա երևում է մեծ հայրենասերի ողջ կյանքում վեպի մասին մտածելիս և, ցավոք, այն չավարտելուց: Հանճարեղ մարդիկ, որոնք ներկայացնում են որևէ ազգի գրականություն, հաճախ նույնանում են տվյալ ազգության նկարագրի հետ: Դառնում են յուրօրինակ ձևով ազգի էության, երազանքների մարմնավորողը: Իսահակյանը խորապես գիտեր համաշխարհային գրականությունը և մարդկության պատմությունը՝ Արևելքը և Արևմուտքը: Նա հրաշալի գիտակցում էր, որ բոլոր ազգերի երազանքները արտահայտված են նրանց էպոսներում և բանահյուսական տարբեր ժանրերում: Պատահական չէ, որ Երվանդ Քոչարի կերտած Սասունցի Դավթի կոթողային արձանն իրականացվել է Ավետիք Իսահակյանի թելադրանքով:

Իսահակյանը իր բազմաժանր ստեղծագործության մեջ կենդանի է պահել հայ ժողովրդական բանահյուսությունը, նաև մասամբ այլ ժողովրդների բանահյուսությունը: Այդ երևույթն առկա է նաև «Ուստա Կարո» վեպում: Դրանում տեսնում ենք լեգենդներ, առասպելներ, սիրո երգեր, ֆիդայական-հայրենասիրական քերթվածներ, հեքիաթներ: Բավական է հիշել, որ «Մայրը» լեգենդը, որը հետագայում նա տպագրեց չափածո, արձակ ձևով կա «Ուստա Կարո» վեպում:

AELITA DOLUKHANYAN

Corresponding member of the NAS RA, Doctor of Philology, Professor

ASPU after Kh. Abovyan

aelita.dolukhanyan@gmail.com

ORCID iD: 0000-0001-9526-9464

FOLKLORIC ELEMENTS IN AVETIK ISAHAKYAN'S NOVEL “USTA KARO”

Keywords: “Usta Karo”, novel, Avetiq Isahakyan, folklore, love songs, legends, myths, legend “The Mother”.

Abstract

Avetik Isahakyan considered his novel “Usta Karo” (Master Karo) to be the pinnacle of his work. This is evident in letters addressed to his close associates, in the great patriot's reflections on the novel, and, unfortunately, in the fact that the novel remained unfinished. Brilliant individuals representing the literature of any nation are often identified with the image of that nation, uniquely embodying its national essence and aspirations. Isahakyan possessed deep knowledge of world literature and human history – both East and West. He was well aware that the aspirations of all nations are reflected in their epics and various genres of folklore. It is no coincidence that Yervand Kochar's monumental sculpture dedicated to David of Sassoun was created at Avetik Isahakyan's insistence.

In his multi-genre work, Isahakyan always turned to Armenian folklore and sometimes to the folklore of other peoples. This phenomenon is also present in the novel “Usta Karo,” where legends, myths, love songs, national liberation — patriotic compositions, and fairy tales are used. It is sufficient to mention that the legend “The Mother,” which he later published in poetic form, is presented in a prose version in the novel “Usta Karo.”

АЭЛИТА ДОЛУХАНЫАН

*Член корреспондент НАН РА,
доктор филологических наук, профессор*

АГПУ им. Х. Абовяна

aelita.dolukhanyan@gmail.com

ORCID iD: 0000-0001-9526-9464

НАРОДНЫЙ ФОЛЬКЛОР В РОМАНЕ АВЕТИКА ИСААКЯНА «УСТА КАРО»

Ключевые слова: роман «Уста Каро», Аветик Исаакян, фольклор, любовные песни, легенды, мифы, легенда «Мать».

Аннотация

Роман «Уста Каро» Аветик Исаакян считал вершиной своего творчества. Это прослеживается в письмах, адресованных близким, прослеживается в раздумьях великого патриота о романе, и, к сожалению, в том, что роман остался незавершенным. Гениальные личности, представляющие литературу какой-либо нации, часто отождествляются с обликом данной нации, в своеобразной форме становясь олицетворением национальной сути и чаяний. Исаакян обладал глубокими знаниями по всемирной литературе и истории человечества – Востока и Запада. Он прекрасно осознавал, что чаяния всех наций отражены в их эпосах и разных жанрах фольклора. Не случайно монументальная скульптура Ерванда Кочара, посвященная Давиду Сасунскому, была создана по настоянию Аветика Исаакяна.

В своем многожанровом творчестве Исаакян всегда обращался к армянскому фольклору, а иногда и к фольклору других народов, и этот феномен присутствует также в романе «Уста Каро», где использованы легенды, мифы, любовные песни, национально-освободительные — патриотические сочинения, сказки. Достаточно упомянуть, что легенда «Мать», которую впоследствии он издал в стихотворной форме, в прозаическом варианте представлена в романе «Уста Каро».

Ներածություն

Ամեն մի նշանավոր գրողի կյանքում կան երկեր, որոնք նրան ուղեկցում են ողջ գիտակցական կյանքում՝ վերջինս առավել կատարյալ տեսնելու բուռն ցանկությամբ: Այդպիսի մի երկ է Ավետիք Իսահակյանի «Ուստա Կարո» անավարտ վեպը: Իսահակյանագետ Ավիկ Իսահակյանն այն իրավացիորեն անվանել է «Ավետիք Իսահակյանի կյանքի գիրքը» (Իսահակյան, 2006: 547), ակադեմիկոս Սերգեյ Սարիյանն այն կոչել է «Իսահակյանի ազգային էպոսը» (Իսահակյան, 2006: 13): Ավիկ Իսահակյանի հեռատես առաջարկով «Հրաչյա Աճառյան» համալսարանը գրողի անտիպ վեպը հրատարակում է՝ այն զարդարելով հանճարեղ Մարտիրոս Սարյանի՝ Հայաստանը ներկայացնող բազմաթիվ գունավոր նկարներով:

2022-ին Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը վեպը՝ «Ուստա Կարո և Օրթե Հարութ» խորագրով, տպագրում է գրողի երկերի լիակատար ժողովածուի VIII հատորում: Ծավալուն բնագիրը հրատարակության են պատրաստել գրականագետներ Գուրգեն Գասպարյանը և Լաուրա Վիրաբյանը: Գուրգեն Գասպարյանը խիստ ուշագրավ առաջաբանի և հարուստ ծանոթագրությունների հեղինակն է (Իսահակյան, 2022: 5-76):

Իսահակյանը «Ուստա Կարո» վեպն սկսել է «Աբու-Լալա Մահարի» պոեմի լույս աշխարհ գալուց անմիջապես հետո: 1924-ին Բոստոնում լույս տեսնող «Հայրենիք» ամսագրի VII հատորում տպագրվում է «Ուստա Կարո» վեպից մի հատված: Այն խորագրված է՝ «Ուստա Կարո» անտիպ վեպից (Մի հատված «Բագրանի ուխտը» գլխից) («Հայրենիք», 1924: 2):

«Հայրենիք» ամսագրի VII հատորը բացվում է «Հայաստանին» հոգեցունց քերթվածով, որը խիստ համահունչ է «Ուստա Կարո» վեպի ասելիքին:

Ծիրանավոր քաջ-Մասիսո՛ւ՝ սպարապետ քեզ պահապան,
Ծերուկների ճակատագրիդ ճամբարներիդ սուրբ օրհնաբան,
Նոյ նահապետ աստվածատես, ածուններիդ վեհ այգեպան,
Մանուկներիդ ու կույսերիդ արյան հնձան, իմ Հայաստան:
(«Հայրենիք», 1924: 2):

Բնականաբար Խորհրդային տարիներին չտպագրված վեպը չէր կարող գրականագետների հատուկ քննության առարկա լինել, մանավանդ, որ իր նամակներում Վարպետը բազմիցս նշում է, թե շարունակում է աշխատել իր պաշտելի վեպի վրա:

Իսկ «Ուստա Կարոն» վերջին հաշվով հայոց ճակատագրի դժվարագնա և ողբերգություններով լի նկարագիրն է, որը պետք է ելքի ուղին ներկայացներ:

Քաղաքական ու պատմական մի մեծ ժամանակաշրջանի պատկերը գեղարվեստորեն ներկայացված է վեպում, սակայն ճշգրիտ է նկատել Սերգեյ Սարինյանը, թե վեպի անավարտության հանգամանքը անխուսափելիորեն կապված է «Հայկական հարցի» անորոշության հետ (Իսահակյան, 2006: 35):

Իր գրական առաջին քայլերից սկսած՝ Իսահակյանը թե՛ չափածո և թե՛ արձակ գործերում լայնորեն օգտագործել է ժողովրդական բանահյուսությունը: Նա ծանոթ էր աշխարհի հայտնի էպոսներին, դրանք կարդացել էր եվրոպական լեզուներով: Պատահական չէ, որ այնքան հմտորեն է մեկնաբանում Շառլ դը Կոստերի մշակած ֆլամանդական էպոսը՝ «Տիլ Ուլենշպիգել»-ը: Այդ էպոսի հայերեն թարգմանության առաջաբանում տեսնում ենք, թե որքան քաջաձանոթ է Վարպետը եվրոպական տարալեզու հարուստ գրականությանը: «Տիլ Ուլենշպիգել»-ը հիացմունք է պատճառել բազմաթիվ եվրոպական գրողների, իսկ Ռոմեն Ռոլանը գրքի համար գրել է մի առաջաբան, որը, ըստ Իսահակյանի, ազդարարում է ազատության էպիկական ծայնը (Շառլ դը Կոստեր, 1987: 8):

Ռոմեն Ռոլանը ֆլամանդական էպոսի համար իր առաջաբանում մեջբերում է էպոսի հետևյալ միտքը. «Որոյա՛կ, երբեք մի զրկիր ոչ մարդուն, ոչ կենդանուն իր ազատությունից, որն այս աշխարհի մեծագույն բարիքն է» (Charles De Coster, 1979: 22):

Ժողովրդական բանահյուսությունը և Իսահակյանը

Իսահակյանի ստեղծագործությունը հետազոտած բոլոր գրականագետներն ու լեզվաբանները հավաստում են Վարպետի ստեղծագործության մեծագույն կապը ժողովրդական բանահյուսության

հետ, որն սկսվեց գրողի գրական առաջին քայլերից և մնաց մինչև հասուն տարիքը:

Գրականագետ Ալբերտ Մուշեղյանը դիպուկ է նկատել, որ ժողովրդական մոտիվներն Իսահակյանի երկերում դառնում են հատկապես անձնական հույզերի արտահայտման միջոց (Մուշեղյան, 1983: 98):

«Ուստա Կարո» վեպում Վարպետը վերստին լայնորեն օգտագործել է ժողովրդական բանահյուսությունը: Սակայն այս կտրվածքով հայ գրականագիտության մեջ հատուկ ուսումնասիրություն մեզ հայտնի չէ: «Հայ նոր գրականության պատմության» V գրքում գետեղված Ավետիք Իսահակյանին վերաբերող ծավալուն բաժնում առանձին անդրադարձ չկա ժողովրդական բանահյուսության այն ժանրերին, որոնք տեղ են գտել վեպի տարբեր էջերում («Հայ նոր գրականության պատմություն», 1979: 392-396):

Վալերի Բրյուսովը «Поэзия Армении» ժողովածուում մեծաքանակ գործեր է դրել Ավ.Իսահակյանից, անձամբ թարգմանել է «Աբու-Լալա Մահարի» պոեմը ու Իսահակյանին համարում է մեկն այն եվրոպական բանաստեղծներից, որոնք արվեստում վճռում են կարևոր խնդիրներ, ինչպես ֆրանսիացիները, գերմանացիները, ռուսները... («Поэзия Армении», 1987: 80):

Իսահակյանի արձակին առանձին անդրադարձ ունի Գ. Ն. Հովհաննիսյանը, որում խոսել է նաև «Ուստա Կարո» վեպի մասին, սակայն բանահյուսության հետ ունեցած կապի վերաբերյալ մանրամասներ չկան (Հովհաննիսյան, 1963):

Ականավոր բանագետ Արամ Ղանալանյանը գիրք ունի՝ նվիրված Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքներին, սակայն դրանում չկա անդրադարձ «Ուստա Կարո» վեպի ժողովրդական բանահյուսության դրսևորումներին: Մանրամասն վերլուծելով ժողովրդական հիմքով ստեղծված Վարպետի բազմաթիվ ստեղծագործությունները՝ Ղանալանյանը մեջբերում ունի 1937 թվականին «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրված Իսահակյանի «Իմ ազատ ու ստեղծագործ ժողովրդի հետ» հոդվածից, որի ասելիքը սերտորեն ձայնակցում է «Ուստա Կարո» վեպի գաղափարախոսությանը. «Պատանի հասակից,- խոստովանում է Իսահակյանը,-

ինձ մշտապես հուզել է, մտալիկել է աշխարհիս մեջ գոյություն ունեցող չարիքը, մարդկությանը տառապեցնող չար իրերը՝ աղքատությունը, շահագործում, ոճիրներ: Ինձ տանջել է հայ աշխատավոր ժողովրդի դառն վիճակը սուլթանի և ցարի դաժան լուծերի տակ և այդ չարիքները վերացնելու գործը, փրկության միջոցները» (Ղանալանյան, 1955: 49):

«Ուստա Կարո» վեպում առատորեն սփռված են բանահյուսական այն հյուսվածքները, որոնցում հայ ժողովուրդը բողոքի ձայն է բարձրացնում ազգային ճնշումների ու կյանքը դառնացնող չար երևույթների դեմ:

Իսահակյանը սովորել է Գևորգյան ճեմարանում և մտերիմ է եղել Հովհաննես Հովհաննիսյանի, Կոմիտասի ու Մանուկ Աբեղյանի հետ, որոնք ժողովրդական բանահյուսության սիրահարներ էին: Դեռ ավելին՝ Կոմիտասն ու Մանուկ Աբեղյանը հանձնարարում էին իրենց սաներին հայրենի գյուղից, գավառից, քաղաքից գրառել բանահյուսական գործեր ու հանձնել իրենց: Այդպես ծնվեց 1905 թվականին Վաղարշապատում լույս տեսած՝ Կոմիտասի ու Մ. Աբեղյանի կազմած «Հազար ու մի խաղ» հրաշք ժողովածուն, որում հավաքված բանահյուսական բազմաժանր գոհարները դարերի համար են:

«Ուստա Կարո» վեպում տեղ են գտել հայ վրեժխնդիր ֆիդայիներին ներկայացնող երգեր, որոնք համահունչ են Եղիշեի դյուցազնական պատմության այն ձևակերպմանը, թե «Մահ իմացեալ անմահութիւն է»: Ուստա Կարոն հաճույքով է լսում վեպի գործող անձերից Փելեշի երգը, որը սազի նվագակցությամբ պատմում է, թե հանուն հայրենիքի ազատության հայը չի վախենում ո՛չ բանտից, ո՛չ մահից և կազատագրի իր հայրենի հողը.

Խաբար տարեք շուն Սուլթանին,

Թող հեռանա մեր երկրեն.

Խաբար տարեք շուն Սուլթանին

Թախտը թողնի ու փախնի,

Հայը վարժություն առեր է

Ֆիդայիներու զենքերեն... (Իսահակյան, 2006: 50):

Հայրենասիրական երգերը երբեմն միահյուսվում են սիրո երգերին, դառնում նաև ննջեցյալների վրա ասվող սգերգեր.

Դուշմանն եկավ, շարան-շարան,
Հայ կտրիճներ թևավորվան,
Բաղեր կտրին, ճուղքեր տարան,
Ամա՛ն, ամա՛ն,

Հայու մերեր սևավորվան... (Իսահակյան, 2006: 410):

Վեպում բավականին առատ են հայ զինվորներին ներկայացնող երգերը. դրանք մարդիկ են, որոնք կամովին գնում են գիտակցական մահվան՝ հանուն հայրենյաց նահատակի պսակին արժանանալու համար.

Կովեցեք տղերք, կովեցեք քաջ, քաջ,

Արժանի լինենք արյան պսակին... (Իսահակյան, 2006: 405):

Հայ հերոսներին նվիրված երգերում հայտնվում է նաև ամեն իսկական հայի համար թանկ ու սիրելի անուն՝ զորավար Անդրանիկը.

Մոտ է գարունը, շուտով կբացվի,

Հայու խոսքն է քաջ, գարուն կբացվի.

Անդրանիկ քաջը իր ընկերներով

Կուգե պատերազմ, կսպասե գարնան (Իսահակյան, 2006, 222):

Արամ Ղանալանյանը եզրահանգել է, թե Իսահակյանի փոխադրած, թարգմանած ժողովրդական ավանդավեպերը, զրույցները, բալլադները, առասպելներն ու երգերը նվիրված են սիրո թեմային (Իսահակյան, 2006: 14): Այդպիսի սիրո երգեր նույնպես առատ են «Ուստա Կարո» վեպում, մանավանդ ուստա Կարոն կնամեճար, սիրառատ տղամարդ է և սիրում է նաև մարմնական սերը:

Վեպում եղած աշուղական սիրերգերը, որոնք անհեղինակ են, ունեն հատվածներ նշանավոր Սայաթ-Նովայի ու Նաղաշ Հովնաթանի սիրերգերից: Դրանք պերճախոս ապացուցում են ժողովրդական բանահյուսության ու գրավոր գրականության ակնհայտ կապերը: Ահա, թե ինչ ջերմ երգի են արժանանում ուրախության սեղանին մասնակցելու եկած տատրակի նման գեղեցիկ երկու հայուհիները.

Արև դիպավ Չանգլու ծովուն,

Ես քեզ սիրի աշնան հովուն

Մեխակ եղար ծոցս ընկար,

Բխով եղար, ոտքս ընկար:

Բոբիկ մի քելե, փուշ է,

Սիրունի պաշն անուշ է:

Արի երթանք մեր այգին տես,

Ճուրթ մը խաղող քաղեմ, ուտես:

Արև դիպավ կապուտ բերդին,

Քո սերն ընկավ մեջ իմ սրտին:

Աշխարհն ինձ տան, ի՞նչ օգուտ է,

Մենակ քեզ տան, քույի սուտ է,

Աշխարհ սուտ է, փթած պուտ է,

Սերն է օղորթ, քույի սուտ է (Իսահակյան, 2006: 183):

Վեպում պատմվում են առասպելներ կախարդ աղջիկների մասին, որոնք ապրում են գետի ջրերում, շատ գեղեցիկ են ու իրենց ճերմակ մերկ մարմնով խենթացնում են տղամարդկանց ու նրանց անհետացնում ջրի ալիքների մեջ:

Ուստա Կարոն Ախուրյանի ջրերին նայելիս հիշում է Աղջկա ձոր կոչվածի առասպելը: Հրաշք աղջիկն իր մարմար մարմինը հանում է ջրից, անուշ երգով խենթացնում երիտասարդներին ու նրանց անհետացնում (Իսահակյան, 2022: 97-98):

«Ուստա Կարո» վեպը հարուստ է նաև ժողովրդական առած-ասացվածքներով, որոնք հաճախակի օգտագործում են վեպի հերոսները՝ իրենց խոսքն առավել դիպուկ ու նպատակային դարձնելու համար:

Ուստա Կարոն ջերմ ընկեր է մահմեդական Մահմուդ Ջավուդի հետ. «Երկուսն էլ ուրիշ ազգերից, ուրիշ կրոններից, բայց ամենալավ եղբայրներից՝ լավ եղբայր» (Իսահակյան, 2006: 48):

Մարդիկ այդ եղբայրությանը չեն հավատում ու զգուշացնում են, թե մի ծաղկով գարուն չի գալիս: Այս հատվածում կա երազանք, ոչ թե մեկ անհատ այլակրոնը ճշմարիտ բարեկամ լինի, այլ աշխարհից ընդմիջտ վերանա ցեղային ու կրոնական խտրականությունը (Իսահակյան, 2006: 49):

Թվարկենք մի քանի առած-ասացվածքներ, որոնք այսօր էլ օգտագործվում են.

Լավ է՝ աչքը ելնի, քան անունը (Իսահակյան, 2006: 106):

Տաճիկը մարդու դանակով կմորթե, ռուսը՝ բամբակով (Իսահակյան, 2006: 108):

Ինձ բուրդ դնեն, բամբակ գզեն (Իսահակյան, 2006: 114):

Սերը զուլում կրակ է, մարդու տղամարդ կդարձնե (Իսահակյան, 2006: 273):

Մարգարեն իր գավառում պատիվ չունի (Իսահակյան, 2006: 299):

Մեռար, գնացիր, ո՛չ էղել ես, ո՛չ չես էղել (Իսահակյան, 2006: 311):

«Ուստա Կարո» վեպում առկա է կատվի մասին մանկական խաղերգի մի տարբերակը, ժողովրդական հարսանեկան կատակերգերից մի փշրանք.

- Գնա՛, հորս հարցրու, որ չտվավ, փախցրու (Իսահակյան, 2006: 285):

Վարպետը եղել է Բագրատունիների տիեզերահռչակ մայրաքաղաք Անիի սիրահարը: Պատահական չէ, որ Հովհաննես Թումանյանը նրան խնդրել է իրեն տանել Անի և ավերակ շինությունների վերաբերյալ բացատրություններ տալ: Այդ մասին վկայում է Վարպետը Թումանյանին նվիրված հուշերում. «Անին իր վեհապահ ճարտարապետությամբ շատ մեծ տպավորություն թողեց Օհաննեսի վրա: Երբ մեկնում էինք Անիից և պարիսպներից դուրս էինք արդեն, Օհաննեսը վերջին անգամ նայեց Անիին և ասաց.

- Ինչքա՛ն մարդ պիտի անբան-անասուն լինի, որ ձեռք բարձրացնի այս հրաշալիքների վրա» («Թումանյանը ժամանակակիցների հուշերում», 2009: 14):

«Ուստա Կարո» վեպում Վարպետը խոր ցավով արձանագրում է. «Մենք անփառունակ զավակներն ենք հին փառքի ու ազատության, ստեղծել էլ չենք կարող և ինչպես մուրացկան օտարի դռներում՝ մուրում ենք լույս, արվեստ և ճաշակ՝ մերը մոռանալով ու արհամարհելով, ուրանալով» (Իսահակյան, 2006: 298):

Անիի անցյալ փառահեղության կորստի ողբը կա թե՛ Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպում և թե՛ Ղևոնդ Ալիշանի «Շիրակ» գրքում: Ալիշանի երկում կարդում ենք հետևյալ բանախյուսական հատվածը.

Անին շեն՝ աշխարհս ավեր,

Անին ավեր, աշխարհս է շեն (Ալիշան, 1881: 90):

Ձայնակցելով Ալիշանին՝ Իսահակյանը մեջբերում է բանախյուսական հետևյալ հատվածը.

Անի՛, Անի՛, ա՛խ, Անի՛,

Քանդողիդ տունը քանդվի,
Քեզ որ ազգը չպահեց,
Մի սուգ անողն ի՞նչ անի (Իսահակյան, 2006: 301):

«Մայրը» լեգենդը և «Լեյլի-Մեջլում» արաբական սիրավեպը

1907 թվականին է Իսահակյանը գրել «Մայրը» լեգենդը, որը նա անվանել է Շիրակի ավանդավեպ: 1974-ին լույս տեսած Իսահակյանի ստեղծագործությունների վեց հատորից բաղկացած ժողովածուի II հատորում ասվում է, թե այդ ժողովրդական զրույցն Իսահակյանը լսել է Ղազարապատ գյուղից Ալեքսանդրապոլ գնալիս (Իսահակյան, 1974: 312): Չի նշվում, որ զրույցի արձակ տարբերակն Իսահակյանը գետնեղել է «Ուստա Կարո» վեպում: Անսահման սիրելով մորը, հասկանալով մայրական սիրո՝ առ զավակն ունեցած եզակիությունը՝ մարդասեր ու մայրասեր Իսահակյանն այդ ցնցող զրույցն օգտագործել է իր պաշտելի վեպում:

Վեպում մեջբերված ժողովրդական զրույցն առավել մոտ է բանահյուսական սկզբնաղբյուրին, քան չափածո լեգենդը: Ահա 2 զուգահյիս հատվածներ.

«Ուստա Կարո» վեպ

«Բալա՛ս, ես հեշ, թող գիլու փայ էղնիմ, արի ջվալը տար, ձեզի պետք կուգա...» (Իսահակյան, 2006: 352):

«Մայրը» ավանդավեպը

Ուշ գիշերին հասավ անտառ,

Խոր ծմակում՝ ծառի տակ,

Պարկը ձրգեց-մորը անճար

Ձրգեց անտեր ու մենակ:

Աշնան քամին էր հեծկտում,

Գայլն էր տալիս կալանջին.

Ոտքը փոխեց, որ դառնար տուն,

Մոր ձայնն հասավ ականջին.-

- Երթաս բարով, Աստված քեզ հետ,

Ոտքըդ քարին թող չըգա.

Տըղա՛ս, վերցրու պարկը քեզ հետ,

Պարկը տանը պետք կըգա (Իսահակյան, 1974: 170-171):

Խորհրդային դպրոցի IX դասարանում Իսահակյանի մայրական սիրո եզակիությունը պատկերող բանաստեղծություններն ընդգրկված էին դպրոցական ծրագրում որպես պարտադիր նյութ: Աշակերտները դրանք անգիր գիտեին ու գրում էին այդ թեմայով շարադրություններ ոչ միայն դպրոցում, այլև բուհեր ընդունվելիս:

Մասնագետները գնահատում էին հանճարի՝ մոր կերպարն անմահացնող քերթվածների մարդասիրական ու դաստիարակչական արժեքը: Երևույթը նաև խորհրդանշում էր, որ մեծ մտածողները գրել են բոլոր դարերի համար:

«Ուստա Կարո» վեպում Իսահակյանը զետեղել է արաբական հանրահայտ «Լեյլի և Մեջլում» սիրավեպի հայացված տարբերակը:

Հայտնի է, որ XII դարի համաշխարհային հռչակ ունեցող պարսիկ բանաստեղծ Նիզամի Գյանջինը ժողովրդական բանահյուսությունից եկող այդ սիրավեպը դարձրել է ծավալուն պոեմի նյութ: Այդ երկում ներկայացվում է երկարատև սիրո մի պատմություն, որը, սակայն, երջանիկ ավարտ չի ունենում: Պոեմում առկա են Լեյլիի ու Մեջլումի նամակագրության հետաքրքիր նմուշներ: Իր երկարաշունչ նամակում Լեյլին ունի անսահման ու հավերժ սիրո խոստովանություններ.

Թող ճակատագիրը դաժան

Պատժի քեզ ցավ տվողին,

Քո մազն անգամ ես չեմ փոխի

Գարնան շքեղ ողջ ծաղկունքին (Низами, 1986: 207):

Պատասխան նամակում Մեջլումը Լեյլիին ասում է.

Ես քո ստրուկն եմ, ականջիդ օղը,

Չվաճառես քեզ նվիրված ծառային (Низами, 1986: 211):

«Լեյլի և Մեջլում» սիրավեպը շատ սիրված է եղել ոչ միայն արաբական միջավայրում, այլև պարսիկների, Միջին Ասիայի ազգերի և Կովկասի ժողովուրդների մոտ: Այն շատ սիրելի է եղել նաև Սայաթ-Նովայի համար: Հնարավոր է Սայաթ-Նովան, որ գիտեր պարսկերեն, ծանոթ էր սիրավեպի պարսկերեն տարբերակին:

Մեծ բանաստեղծի հայերեն սիրո երգերում Լեյլին ու Մեջլումը շարունակ հիշատակվում են.

Մեջլումի պես սարն իմ նընգի, Լեյլումեն խաբար չունիմ.

Էշխենետ սիրտըս էրվում է, հովանալու ճար չունիմ

(Սայաթ-Նովա, 1963: 34:)

Մեջլումի պես կորավ յարըս,
Լեյլի ջան, ման իմ գալի յանա-յանա
(Սայաթ-Նովա, 1963: 41):

«Ուստա Կարո» վեպում «Լեյլի և Մեջլում» սիրավեպը տեղայնացված է: Գործողությունները տեղի են ունենում Բինգյուլի աղբյուրի մոտ: Լեյլին տեսնում է Մեջլումին, որին երազը տարել էր Բինգյուլի աղբյուրը: Նրանք այնքան են զմայլվում միմյանցով, որ յոթ օր, յոթ գիշեր մնում են աղբյուրի մոտ.

Յոթն օր, յոթ գիշեր բոլորավ,
Լեյլին ասավ.
-Ա՛յ Մեջլում, իմ սեր ու իմ սրտի տեր,
Ինձ հրաման տուր,
Մի կուժ ջուր տանեմ հորս վրանը,

Առավոտ էլի քու մոտը կուգամ (Իսահակյան, 2006: 271):

Սակայն Լեյլիի հայրը իր քոչը շարժում է Բինգյուլից, ու Մեջլումը, այլևս չգտնելով Լեյլիին աղբյուրի մոտ, վշտից մեռնում է: Երկնքում թռչող հավքից Լեյլին իմանում է, որ Մեջլումը Լեյլիի կարոտից մեռել է, ու նրա ոսկորները Բինգյուլի ծաղիկների մեջ են: Լեյլին տեսնում է այդ ոսկորներն ու այնքան է լալիս, որ վշտից մեռնում է: Նա և Մեջլումը, Աստծու հրամանով, դառնում են աստղեր ու տարին մեկ անգամ հանդիպում են երկնքում: Սիրավեպի ավարտը հիշեցնում է Հովի. Թումանյանի «Անուշ» պոեմի վերջին հատվածը.

Աստծու հրամանով տարին մեկ անգամ
Լեյլի ու Մեջլում աստղերն իրար կուգան,
Կարոտ-ծարավ սրտով կփաթթվին իրար,
Պաչ կուտան ու պաչ կառնեն,
Նորից իրարու կհեռանան
Ու կերթան նորեն,
Լեյլին՝ Մեջլումի տեղը,
Մեջլում՝ Լեյլիի,-
Լեյլին՝ հարավկողմ,

Մեջլում՝ հյուսիս... (Իսահակյան, 2006: 272):

Այս սիրավեպը տակնուվրա է անում Ուստա Կարոյի ներաշխարհը, և նա բարձրաձայն եզրահանգում է, թե «առանց սիրո աշխարհքը չարժե իր չիրուխի ծխին» (Իսահակյան, 2006: 273):

Իրականում ժողովրդական բանահյուսությունը լայնորեն սփռված է (Ուստա Կարո) վեպում և հանդես է գալիս միևնույն ժանրի տարբեր դրսևորումներով՝ մի առանձին հմայք հաղորդելով այս իմաստուն ազգապատումին:

Եզրակացություն

Ավ. Իսահակյանն իր «Ուստա Կարո» պաշտելի վեպի վրա աշխատել է երկար տարիներ, սակայն այն մնացել է անավարտ: Վեպը խորապես կրում է ժողովրդական բանահյուսության կնիքը: Այն ունի քաղաքական ուղղվածություն. հեղինակը ներկայացնում է պետականությունը կորցրած հայ ժողովրդի ծանր վիճակը՝ օտարների լծի տակ: Վեպի մեջ լայնորեն կիրառված են հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրեր: Կան հայրենասիրական-ազատագրական երգեր: Խորհրդանշական է զորավար Անդրանիկի կերպարը:

Ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերի կիրառումը վեպում հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել:

Ուշագրավ է Վարպետի գործածած «Լեյլի և Մեջլում» արաբական սիրավեպի հայացված տարբերակը:

«Ուստա Կարո» վեպը նման է ժողովրդական ասքի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Աղբալյան Ն.,** Ընտրանի, Կազմեց, և ծանոթագրեց Գառնիկ Անանյանը, ԵՊՀ հրատ., Եր., 2005, 361 էջ:
2. **Ալիշան,** Շիրակ, Վենետիկ, 1881, 330 էջ:
3. **Դը Կոստեր Շառլ, Ուլենշպիգելի և Լամմե Գուդգակի լեգենդը,** ակադեմիկոս Ավ.Իսահակյանի առաջաբանով, «Լույս» հրատ., Եր., 1987, 464 էջ:
4. Թումանյանը ժամանակակիցների հուշերում, «Էդիթ Պրինտ» հրատ., Եր., 2009, 998 էջ:
5. **Իսահակյան Ավ.,** Երկերի ժողովածու վեց հատորով, հ.II, «Հայաստան» հրատ., Եր. 1974, 335 էջ:
6. **Իսահակյան Ավ.,** Ուստա Կարո, Տեքստը կազմողները՝ Ավիկ Իսահակյանը և Անահիտ Վարդանյանը, գլխավոր խմբագիր՝ Ավագ Խաչատրյան, առաջաբանի հեղինակ՝ Սերգեյ Սարինյան, «Տիգրան Մեծ» հրատ., Եր., 2006, 575 էջ:

7. **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. VIII, Ուստա Կարո և Օրթն Հարութ (Երկրորդ տարբերակ), գիրք Ա, «Էդիթ Պրինտ» հրատ., Եր., 2022, 949 էջ:
8. **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, 1934-1986, «Սովետական գրող» հրատ., Եր., 1986, 622 էջ:
9. **Հախվերդյան Լ.**, Վարպետը, «Արևիկ» հրատ., Եր., 1990, 207 էջ:
10. **«Հայրենիք»** ամսագիր, թիվ 7, Բոստոն, 1924, 144 էջ:
11. **Հովհաննիսյան Գ.Ն.**, Ավետիք Իսահակյանի արձակը, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1963, 186 էջ:
12. **Ղանալանյան Ա.Տ.**, Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Եր., 1955, 103 էջ:
13. **Մուշեղյան Ա.**, Ավետիք Իսահակյան, վաղ տարիներ, 1875-1898, «Սովետական գրող» հրատ., Եր., 1983, 293 էջ:
14. **Սայաթ-Նովա**, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց, խմբագրեց, ծանոթագրեց Մորուս Հասրաթյան, Հայպետհրատ, Եր., 1963, 347 էջ:
15. Поэзия Армении с древнейших времен до наших дней, под редакцией, со вступительным очерком и примечаниями В.Брюсова, Изд. «Советакан грох», Ер., 1987, 523 с.
16. **Isaakian Av.**, Abou-Lala-Mahari, Traduit de l'arménien par Jean Minassian, Illustration de Shart, éd. de l'Union d'entraide Franco-Arménienne, Paris, 1952, 34p.
17. **Низами Гянджеви**, Собрание сочинений в пяти томах, т. III, Лейли и Меджнун, Перевод с фарси Татьяны Стрешневой, Изд. "Художественная литература", Москва, 1986, 366 с.

REFERENCES

1. **Aghbalyan N.**, Entrani, (Selected works) kazmets, ev tsanotagrets Garnik Ananyan, YPH hrat. Yerevan, 2005, 361p.
2. **Alishan L.** Shirak (Shirak), Venetik, 1881, 330p.
3. **De Coster Charles**, Ulenspigeli ev Lamme Gudzaki legendə (The Legend Ulenspiegel and Lamme Gudzak), akademikos Avetik Isahakyan aradjabanov, "Luys" hrat., Yerevan, 1987, 464 p.
4. Tumanyanə jamanakakitsneri husherum (Tumanian in the memories of contemporaries), "Edit-Print" hrat., Yerevan, 2009, 998 p.
5. **Isahakyan Av.**, Yerkeri joghovatsu vets hatorov, II hator, (A collection of works in six volumes, v. II), "Hayastan" hrat., Yerevan, 1974, 335 p.

6. **Isahakyan Av.**, Usta Karo (Usta Karo), Textð kazmoghnereð Avik Isahakyanð ev Anahit Vardanyanð, glkhavor khmbagir Avag Khachatryan, aradjabani heghinak Sergey Sarinyan, “Tigran Mets” hrat., Yerevan, 2006, 579 p.
7. **Isahakyan Av.**, Erkeri liakatar joghovatsu, h. VIII, Usta Karo ev Orte **Harut** (Complete collection of works, Usta Karo and Orte Harut), erkrord tarberak, girk A., “Edit-Print”, Yerevan, 2022, 949 p.
8. **Khachatryan H.**, Grakan teghekatu, 1934-1986 (Literary reference book, 1934-1986), “Sovetakan grogh” hrat., Yerevan, 1986, 622 p.
9. **Hakhverdyan L.**, Varpetð (The Master), “Arevik” hrat., Yerevan, 1990, 207 p.
10. **“Hayrenik”** amsagir (“Hayrenik”-“Homland” magazine), tiv 7, Boston, 1924, 144 p.
11. **Hovhannisyan G.N.**, Avetik Isahakyan ardzakð (Avetik Isahakyan’s prose), HSSR GA hrat., Yerevan, 1963, 186 p.
12. **Ghanalanyan A.T.**, Av. Isahakyan stechtsagortsutyan joghovrdakan akunqnerð (The Folk Origins of Av.Isahakyan Work), HSSR GA hrat., Yerevan, 1955, 103 p.
13. **Musheghyan A.**, Avetik Isahakyan, vagh tariner, 1875-1898 (Avetik Isahakyan, Early years, 1875-1898), “Sovetakan grogh” hrat., Yerevan, 1983, 293 p.
14. **Sayat-Nova**, Hayeren, vratseren, adrbedjaneren khagheri joghovatsu (A collection of songs in Armenian, Georgian, Azerbaijani), kazmets, khmbagrets, tsanothagrets Morus Hasratyan, Haypethrat, Yerevan, 1963, 347 p.
15. Poeziya Armenii s drevneyshikh vremen do nashikh dney (Armenian Poetry from Ancient Times to Present Days), pod redaktsiey so vstupilelnim ocherkom i premechanyami V.Bryusova, Izd. “Sovetakan grogh”, Yerevan, 1987, 528 p.
16. **Charles de Coste**, La Légende d’Ulenspiegel, Ed. Progrés, Moscou, 1973, 701 p.
17. **Nizami Gyandjevi**, Leyli i Medjnun (Leyli and Medjnun), Sobranie sochineniy v pyati tomakh, perevod s Farsi Tatyani Streshnevoy, “Khudojestvennaya literatura, Moskva, 1986, 366 p.